ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

06. 07. 2023 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 21-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի II ընթացիկ ստուգումների ու քննությունների և քննաշրջանի (առանց լուծարքային շրջանների) արդյունքների ամփոփում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. 2023-2024 ուստարվա ուսումնական պլանների հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
4. 2023-2027 առկա և 2023-2028 հեռակա ուսուցման կրթական ծրագրերի մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի մասին զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննություններն ու ստուգումներն իրականացվել են ս.թ. մայիսի 16-27-ն ընկած ժամանակահատվածում, առկա ուսուցմանը՝ մայիսի 30-ից հունիսի 3-ը: Ս.թ. հունիսի 6-24-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է նաև առկա և հեռակա ուսուցման քննաշրջանը:

Առկա ուսուցման համակարգում քննաշրջանն առանց պարտքերի են ավարտել «Հայոց լեզու և գրականություն» I, II, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» I, «Հոգեբանություն» I, II, «Ռուսաց լեզու և գրականություն» III, «Ֆրանսերեն լեզու և

գրականություն» I և II կուրսերը: Նշված համակարգում անվճար ուսուցմամբ սովորող ուսանողների (69 ուսանող) բացարձակ առաջադիմությունը կազմել է 100 %: Վճարովի համակարգում սովորող ուսանողների (207 ուսանող) բացարձակ առաջադիմությունը կազմել է 85,5 %:

Հեռակա ուսուցման համակարգում (183 ուսանող) քննաշրջանն առանց պարտքերի է ավարտել միայն «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» I կուրսը:

Արդեն սկսվել է I լուծարքային շրջանը, որը տևելու է հունիսի 29-ից մինչև հուլիսի 6-ը: Ժամանակացույցներն ուղարկվել են ամբիոններ և տեղադրվել են ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքում: Ժամանակացույցներում արտահայտված է նաև լուծարք ունեցող ուսանողների թիվը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտներ Ա. Ավագյանը, Ք. Հարությունյանը, Կ. Պողոսյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի II ընթացիկ ստուգումների ու քննությունների և քննաշրջանի (առանց լուծարքային շրջանների) արդյունքները համարել բավարար և տվյալ հարցի վերաբերյալ Կ. Պողոսյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը նշեց, որ ս.թ. մայիսի 6-27-ն ընկած ժամանակահատվածում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում իրականացնել է 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցման, հունիսի 10-27-ը՝ հեռակա ուսուցման շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետում 2022-2023 ուստարվա առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել է 61 շրջանավարտ՝ 7 կրթական ծրագրով՝ «Պատմություն», «Հոգեբանություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»:

«Պատմություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը

նախագահում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.թ. Ավետիս Հմայակի Հարությունյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 7 շրջանավարտ. 5-ը ստացավ «գերազանց», 2-ը՝ «լավ»: Հանձնաժողովի նախագահը բարձր է գնահատել շրջանավարտների կողմից մասնագիտական գիտելիքների և պատկերացումների դրսևորման, դրանց կիրառման կարողությունների, ինչպես նաև իրենց մասնագիտության շրջանակներում դատողություններ անելու կարողությունների մակարդակը: Ըստ նախագահի՝ ցանկալի կլիներ, որ ավարտական աշխատանքների թեմաների ընտրության և հաստատման ժամանակ որոշակի ուշադրություն դարձվեր հայոց պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանի թեմաներին, իսկ պաշտպանության ժամանակ ուսանողներն իրենց դրսևորեին ավելի անկաշկանդ:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Լաուրա Համբարձումի Պետրոսյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած 6 շրջանավարտն էլ ստացավ «գերազանց»: Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ շրջանավարտներն ունեն բարձր պատրաստվածություն և մեծ ներուժ՝ հոգեբանության դաշտում հետազոտությունները շարունակելու առումով: Բարձր է գնահատվել շրջանավարտների կողմից սեփական տեսակետների պաշտպանության կարողությունների, մասնագիտական գիտելիքների և պատկերացումների, դատողությունների դրսևորման, հաղորդակցման կարողությունների մակարդակը: Մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվել է, որ հետազոտական աշխատանքները մեթոդական տեսանկյունից լինեն առավել հիմնավորված, իսկ աշխատանքների թեմաները՝ առավել կոնկրետ: Նախագահը հետազոտական ռազմավարությունը կատարելագործելու, ինչպես նաև աշխատանքների պաշտպանության ընթացքում ղեկավարների ներկայությունն ապահովելու ցանկություն է հայտնել:

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մ.գ.դ., դոցենտ Նաիրա Երվանդի Դալյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 3 շրջանավարտ. 2-ը ստացավ «գերազանց», 1-ը՝ «լավ»: Հանձնաժողովի նախագահը հետագա բարելավման ուղղությամբ առաջարկել է

խորացնել ռուսերենի և ռուս գրականության վերաբերյալ հիմնարար տեսական գիտելիքները, աշխատանքներում ուշադրություն դարձնել ժամանակակից մեթոդիկայի տեսակետից թեմաները ներկայացնելու ձևաչափերին (ռուսերենը որպես օտար լեզու դասավանդելու գործընթացում), ավելի շատ աշխատել շրջանավարտների բանավոր խոսքի ձևակերպման հմտությունները զարգացնելու վրա: Ընդհանուր առմամբ զոհունակություն է արտահայտվել ամփոփիչ ատեստավորման գործընթացի վերաբերյալ, ընդգծվել, որ այն կազմակերպվել էր համաձայն գործող կարգի և սահմանված կանոնակարգի, քննությունն արտացոլում էր մասնագիտությանը ներկայացվող հիմնական պահանջները:

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության («Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Լուսինե Արմենի Հարությունյանը: «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 21 շրջանավարտ. 15-ը ստացավ «գերազանց», 6-ը՝ «լավ»: «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 6 շրջանավարտ. 5-ը ստացավ «գերազանց», 1-ը՝ «լավ»: Ըստ հանձնաժողովի նախագահի՝ գերազանց գնահատված աշխատանքներում առկա էր վերհանված խնդիրների մանրազնին վերլուծություն, ուսանողների գերիշխող մասը կարողացավ հստակ ներկայացնել ուսումնասիրման արդյունքները: Հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվել է ավարտական աշխատանքների բովանդակությունը ներկայացնելիս տեսասահիկներում նվազագույնի հասցնել տեքստային բաղադրիչը, ավելի մեծ ուշադրություն դարձնել շրջանավարտների փոխանցելի հմտությունների զարգացմանը:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Գալստյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 8 շրջանավարտ. 7-ը ստացավ «գերազանց», 1-ը՝ «լավ»: Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ ավարտական աշխատանքների թեմաներն արդիական էին, աշխատանքները շարադրված էին գրագետ և բավարարում էին ներկայացվող պահանջները: Ըստ նախագահի՝ ամբիոնը զգալի աշխատանք է իրականացրել: Բարձր է

գնահատվել շրջանավարտների մասնագիտական բազային գիտելիքների, մտածական և հաղորդակցական կարողությունների դրսևորման մակարդակը, նրանց կողմից արդի տեսական գրականության և բնագրային աղբյուրների ուսումնասիրման փաստը: Ընդգծվել է, որ շահեկան է պաշտպանությանը ներկայանալ գեղեցիկ սահիկաշարով:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Արուսյակ Վաչագանի Հովհաննիսյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 10 շրջանավարտ. 5-ը ստացավ «գերազանց», 5-ը՝ «լավ»: Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ ուսանողները բավական լավ ներկայացրին իրենց աշխատանքները. նրանք տիրապետում էին մանկավարժական հետազոտական աշխատանք կատարելու մեթոդաբանությանը: Թեմաների աշխարհագրությունը բավականին լայն էր և արդիական: Նախագահը հատկապես կարևորել է աշխատանքներում գրականության ընտրությունը, սկզբունքայնությունը: Ըստ նրա՝ ցանկալի կլիներ ավելի շատ ուշադրություն դարձնել աշխատանքի գիտական ապարատին՝ արդիականության, նպատակի, խնդիրների ձևակերպմանը, ժամանակակից գիտամանկավարժական գրականության ուսումնասիրությանը, հետազոտություն կատարելիս մեթոդների, գործիքների ուսումնասիրությանը և կիրառությանը, տեսությունը և պրակտիկան համատեղել հետազոտական աշխատանքներում:

Ֆակուլտետում 2022-23 ուստարվա հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել է 28 շրջանավարտ՝ 3 կրթական ծրագրով՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն» և «Հոգեբանություն»:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Արուսյակ Վաչագանի Հովհաննիսյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 15 շրջանավարտ. 3-ը ստացավ «գերազանց», 11-ը՝ «լավ», 1-ը՝ «բավարար»: Ըստ հանձնաժողովի նախագահի՝ ամփոփիչ ատեստավորման քննությունն անցել է բավական հաջող: Գնահատելի է, որ ուսանողներն անդրադարձել են կրթության ժամանակակից խնդիրներին: Բոլոր ուսանողներն էլ լավ էին տիրապետում իրենց ավարտական աշխատանքներին՝ հստակ ներկայացնելով իրենց

կողմից իրականացված ինչպես տեսական-վերլուծական, այնպես էլ հետազոտական աշխատանքները: Մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվել է հստակեցնել աշխատանքների նպատակն ու խնդիրները, թեմաների վերնագրերը, ուշադրություն դարձնել հետազոտության մեթոդների ընտրությանը:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Լաուրա Համբարձումի Պետրոսյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 6 շրջանավարտ. 1-ը ստացավ «գերազանց», 3-ը՝ «լավ», 2-ը՝ «բավարար»: Հանձնաժողովի նախագահը մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկել է կատարելագործել հետազոտական աշխատանքների թեմաների ընտրությունը, ուսանողների հետազոտական կարողությունները, հոգեբանական կիրառական հմտությունները:

«Պատմություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.թ. Ավետիս Հմայակի Հարությունյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 7 շրջանավարտ. 2-ը ստացավ «լավ», 5-ը՝ «բավարար»: Ըստ հանձնաժողովի նախագահի՝ ցանկալի կլիներ, որ ավարտական աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ հաշվի առնվեին պատմական ժամանակահատվածների համամասնական բաժանումները: Արդյունավետության տեսանկյունից նախընտրելի է թեմաներ ընտրել ոչ միայն միջնադարից, այլև հնագույն, հին, նոր, նորագույն ժամանակներից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքները համարել բավարար և տվյալ հարցի վերաբերյալ Կ. Պողոսյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ Կ. Պողոսյանը նշեց, որ ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում վերջնական տեսքի են բերվել 2023-2024 ուստարվա

ուսումնական պլանները, դրանք ուղարկվել են Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման (ԿԲԴՎ) բաժին: Ուսումնական պլանները վերանայվել են ԿԲԴՎ բաժնի կողմից և այժմ ներկայացված են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2023-2024 ուստարվա ուսումնական պլանները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ տիկին Պողոսյանը նշեց, որ ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում վերանայվել և ավարտուն տեսքի է բերվել 2023-2027 ուստարիների առկա ուսուցման 7 կրթական ծրագիր՝ «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Պատմություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ռուսաց լեզու և գրականություն»:

Ամբիոնների կողմից վերանայվել և վերջնական տեսքի է բերվել 2023-2028 ուստարիների հեռակա ուսուցման բակալավրի 4 կրթական ծրագիր՝ «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հոգեբանություն»:

Պատրաստ է նաև «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հավանություն տալ 2023-2027 առկա և 2023-2028 հեռակա ուսուցման վերանայված կրթական ծրագրերին և դրանք ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի ընթացիկ՝ 5-րդ հարցի առնչությամբ տիկին Պողոսյանը նշեց, որ ֆակուլտետի յոթ կրթական ծրագրերի ղեկավարները 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում բարեհաջող իրականացրել են իրենց գործառույթները, և առաջարկեց հաջորդ՝ 2023-2024 ուստարում նրանց գործունեության շարունակման համար

հավանություն տալ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հավանություն տալ ֆակուլտետում գործող կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության շարունակմանը 2023-2024 ուստարում:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան